ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

09 դեկտեմբերի 2016 թվականի N 125-Հ

ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 33-րդ, 35-րդ, 36-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ընկերության 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՀՀ ԷՆ-1/16 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ> ՓԲ ընկերությանը՝ մեկ ամիս ժամկետով տրամադրել երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՈՒՀ-29/006 համաձայնությունը, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տարածքում, հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4483028,5653 Y=8480033,6572; 2.X=4483175,5084 Y=8480153,1550; 3.X=4483292,8522 Y=8480512,4180 4.X=4483459,8522 Y=8480616,4180; 5.X=4483669,1989 Y=8480980,8881; 6.X=4483361,7613 Y=8481338,5498 7.X=4483205,2868 Y=8481448,5170; 8.X=4483122,6389 Y=8481377,1864 9.X=4483061,8522 Y=8481153,4180; 10.X=4482997,8168 Y=8480752,5525; 11.X=4483084,6374 Y=8480554,7874; 12.X=4483158,8522 Y=8480499,4180; 13.X=4483152,8522 Y=8480247,4180 14.X=4483128,8522 Y=8480188,4180; 15.X=4482995,1813 Y=8480048,9551; (տրված է ARM WGS-84 համակարգով) սահմանափակված 44 հա տարածքում՝ ռեգիոնալ բնույթի ինժեներաերկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2. Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում նախապատրաստել ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տարածքում, սույն հրամանի 1-ին կետում նշված կոորդինատներով սահմանափակված տարածքում՝ ընդերքի ռեգիոնալ բնույթի ինժեներաերկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման պայմանագիրը և ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին,

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացնելուց հետո, 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման

անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի (համաձայնություն, պայմանագիր) փաթեթը,

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «<Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ